

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅԻՆ

Մինչևտական վոփիուսրիւներ Սնգլիայում:—Մակեդոնական րէֆորմների ընդարձակման առաջակ:—Միւրուշեզի օւսակցուրիւնից յետոյ պաշօնական հաղորդագրուրիւն մակեդոնական հարցի մասին:—Ռէնգարական կրիզիս:—Միշպարշամենական համաժողով Վիեննայում:—Միշազգային վիճերի բարորուսական լուծում եւ միշազգային օրիութաբ:—Դործերը Մերձաւոր Արևելք:

յում:—† Սուլիաս վարդապետ Պարոնեան:

Զեմբերյենը, տեսնելով որ անգլիական ազատ հասարակական կարծիքը լաւ ընդունելութիւն չը ցոյց տուեց իր նոր ֆինանսական ծրագրներին, խելացի համարեց հրաժարուել իր մինիստրական պորտֆելից և իր ամբողջ ժամանակն և եռանդը գործադրել այդ կարծիքը իր կողմը գրաւելու. նա կը պատի թէ Անգլիայում և թէ անգլիական հեռաւոր գաղութներում և կ'աշխատի իր ճառերով, իր բրոշիւներով համոզել իր նոր սիստեմի բոլոր առաւելութիւնների մէջ: Մրցումը, պայքարը դրուած է ազատ հողի վրայ, և յաղթողը կը լինի նա, ով աւելի գիտութիւն, եռանդ և ժամանակակից պահանջների պայծառ ըմբռնողութիւն ցոյց կը տայ:

Անգլիան մինչև վերջերը իրան ոչ յատուկ անտարբերութեամբ էր վերաբերում դէպի Մերձաւոր Արևելքում այժմ տեղի ունեցող ցաւալի անցքերը: Մի բան միայն յայտնի էր. նա պլատոնական դանկութիւն էր յայտնում, որ աւելի ընդարձակուեն Մակեդոնիայի համար առաջարկուած բեֆորմները, տեղային ինքնավարութիւնը աւելի հաստատ և ապահով հիմքերի վրայ դրուած լինի:

Այժմ հասարակական կարծիքն ևս արթնացել է իր լե-

տարդիական քնից, ինչպէս այդ երևում է սեպտեմբերի 17-ին Լոնդոնի Աշնա-Ձէմս-Հոլլում Ուորչեստերի եպիսկոպոսի նախագահութեամբ տեղի ունեցած բազմամարդ միտինդի նկարագրութիւնցից:

Անդիմական եկեղեցու պետք կենարը թիւնական արքեպիսկոպոսը այդ միտինդին նամակ էր ուղարկել, որի մէջ յայտնում է, թէ անդիմական ամբողջ ժողովուրդը պատրաստ է Անդիմայի զօրաւոր աղջեցութիւնը գործ դնելու վերջ տալու Բալկանեան թերակղու վրայ ներկայում կատարուող անդիմութիւններին, անկարգութիւններին և յափշտակութիւններին, Կարդացուել են նաև շատ եպիսկոպոսների և պարլամենտի անդամների նոյն ողով դրուած նամակներ և հեռագրեր:

Միտինդին մասնակցող ժողովուրդը կայացրել է հետեւեալ որոշումները.

1) Մակեդոնիայի խառնակութիւնը և թիւրքական հսկողութեամբ բարենորոգումներ մտցնելու փորձերի անաջողութիւնը անհրաժեշտ են դարձնում դադարեցնել սուլթանի իշխանութիւնը մակեդոնական գաւառների վրայ:

2) Այն պարտականութիւնները, որ Անդիման վերցրել է իր վրայ Բերլինի դաշնագրով, պահանջում են, որպէսզի Անդիման դադարեցնէ այդ ժողովրդի կոտորածը և ունեցուածքի թալանումը, միենոյն ժամանակ աշխատելով դաշնագիրը սուրագրող միւս պետութիւններին գրաւել դէպի այդպիսի քաղաքանութիւնը:

3) Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն հասցնել սովորացն առնելու համար և Բալկանեան կոմիտետ հիմնել կարոտեաններին նպաստելու համար:

Անշուշտ այդպիսի կտրուկ ոճ անկարող է բանացնել Բալֆուրի մինիստրութիւնը, որ պէտք է հաշւի առնի ոռւսաւոտրիական համաձայնութիւնը մակեդոնական հարցի նկատմամբ Այդ համաձայնութեան գիմաւոր նպատակը աւստրօռուսական շահներն են, ձգտումն է՝ այդ երկու պետութիւնների մէջ Բալկանեան թերակղում տեղի ունենալիք թիւրիմացութիւնների առաջն առնելը խաղաղ միջոցներով: Եւ այն ամենը, ինչ որ համապատասխան չէ այդ գլխաւոր նպատակին, ընդունելի չը պիտի լինի Վիեննայում և Պետերբուրգում: Շափրիայի Մեւրուշէգ ոսորդական ամրոցում Ֆրանց-Յովիչի և Նիկոլայ կայսրների տեսակցութիւնից յետոյ «Պրավիտ. Ենտ.»-ում տպուած էր հետեւեալ հաղորդակցութիւնը.

«Օգոստափառ Միապետաների համանով, Լամզդորֆ և Գո-

լուխովսկի կոմսերը ուղարկեցին Կ.-Պոլսի ոռուսաց և աւտորօ-
ունդարական դեսպաններին հետեւեալ համանման հեռագիրը.
«Վերջին ժամանակներս դուք լիազօրութիւն ունէիք յայտնել, որ
Ռուսաստանը և Աւստրիան անշեղ շարունակում են խաղաղացման
իրանց ձեռնարկած գործը, հետեւելով տարուայ սկզբում մշակած
ծրագրին, չը նայելով նրա իրագործման համար ծագած դը-
ժուարութիւններին. Յիրաւի այն ժամանակ, երբ մի կողմէց յեղափոխական կոմիտեաները անկարգութիւններ էին յա-
րուցանում և արգելում էին քրիստոնեայ ազգաբնակութեանը
երեք վիլայէթներում աջակցութիւն ցոյց տալ րեֆորմների ի-
րագործման, միւս կողմէց Բարձրագոյն Դրան օռգանները, ո-
րոնց վրայ դրուած էր բէֆորմների գործադրութիւնը, առհա-
սարակ ներկայ դէպքում ցանկալի եռանդ չէին ցոյց տալիս և
չը համակուեցին այդ ձեռնարկութիւնների հիմքի մէջ դրած
խոկական նպատակներով, ապացուցանելու համար, որ իրանք
հաստատ վճռել են պնդել, որ իրագործուեն վերոյիշեալ րե-
ֆորմները, որոնք ընդունուած են Բ. Դոնից և որոնք նպա-
տակ ունեն երաշխաւորել ընդհանուր ապահովութիւնը; Երկու
կառավարութիւնները պայմանաւորուեցին կոնտրոլի և վերահսո-
կողութեան աւելի իրական եղանակների վերաբերմամբ, և դուք
առանց յապահելու կը ստանաք ճիշտ ցուցմունքներ այդ առար-
կայի վերաբերմամբ. Եթէ մի կողմէց երկու կառավարութիւնն-
ները կատարելապէս ճանաչում են Բարձրագոյն Դրան իրա-
ւունքը և պարտաւորութիւնը՝ ճնշելու կոմիտեաների շարամիտ
ագիտացիայի շնորհիւ առաջացած անկարգութիւնները, միւս
կողմէց նրանք չեն կարող ցաւ չը յայտնել, որ այդ ճնշումը
կապուած էր բանութիւնների և գաղանութիւնների հետ, որոն-
ցից տանջուում էր խաղաղ աղքարնակութիւնը; Ի նկատի ունե-
նալով այդ՝ նրանք խիստ անհրաժեշտ են համարում օգնութեան
հասնել այդ վշտալի անցքերի զոհերին, և վերոյիշեալ հրահանդ-
ները ձեզ ցոյց կը տան մանրամասնօրէն գոյութեան ամեն մի-
ջոցներից զուրկ բնակիչներին օգնելու եղանակները, դիւրացը-
նելով նրանց վերադարձը դէպի իրանց տեղերը և հոգ տանելով
վերականզնելու այրուած գիւղերը, եկեղեցիները և դպրոցները,
Ռուսաստանի և Աւստրօ-Ռւնդարիայի կառավարութիւնները
հաստատ յօյս են տածում, որ նրանց անընդհատ ջանքերը կը
հասնեն հաստատուն խաղաղացման դժագրուած նպատակին
խոռվութիւններից վեասուած շրջաններում և համոզուած են, որ
նրանց կատարելապէս անկողմնապահ խորհուրդները կ'ընդու-
նուեն բոլորից, ում որ նրանք վերաբերում են»:

Պարզ է որ մի տարի առաջ կայացած համաձայնութիւնը անփոփոխ է մնում և այժմ:

Աւստրօ-Ռւնդարիայի ծերունի կայսրը այս վերջին ամսում ապիթ ունեցաւ հիւրընկալելու ոչ միայն Ծուաստանի Միապետին, այլև Էդուարդ VIL-ին, Վիլհելմ II-ին, ոումընական և յունական թագաւորներին, իսկ ինքը այցելեց Գալֆիայի լեներին Լվովում և մի քանի անգամ գնաց Բուգավեցու, յոյս ունենալով իր անձնական հեղինակութեամբ կոտրել ունդարական բնդդիմութիւնը:

Իր ժամանակին մնաք նկատել էինք ունդարական մինիստրնախազակ Սելլիի հրաժարականի և ծայրայեղ ազգայնական կուսակցութեան պահանջների մասին, որոնց մէջ առաջնակարգ տեղն է բռնում այն, որ մաջառական լեզուով կատարուի զինուորական հրամանատութիւնը ունդարական զօրքում: Մաջառները մոռանում էին, որ այդ դէպքում նաև չեխները, խորվատները և լեհները պէտք է նոյն պահանջն անեն. դրանով կործանւում էր աւստրօ-ունդարական զօրքի միութիւնը: Եւ ահա ունդարական այդ շաւակնութիւններին վերջ գնելու համար զօրքի ընդհանուր հրամանատարը—Թրանց-Յովսէփ կայսրը—Գալիցիայի Խլոպը բաղաքում, սեպտ. 16-ին ստորագրեց մի հրաման՝ ուղղած աւստրօ-ունդարական զօրքին: Այդ հրամանի մէջ կայսրը բացարձակապէս յայտնում է, թէ ինքը երբէք չի համաձայնուել ընդունելու մաջառ ազգայնականների վերջին պահանջը. «Թող իմ զօրքը իմանայ, որ ես երբէք չեմ հրաժարուի զօրքի բարձրագոյն հրամանատարին յատկացրուած իրաւունքներից և արտօնութիւններից: Ընդհանուր և միապաղադ, ինչպէս է այժմ, պիտի մնայ իմ զօրքը և այսուհետեւ Կայսրի այդ խօսքերը Ունդարիայում առաջացրին դժուհութեան կատաղի փոթորիկ: Ունդարիան հրաժարւում է ոչ միայն նոր զինուորներ տալուց, այլև հարկ վճարելուց... Ունդարացիք այդ հրամանը համարում են սահմանադրութեան խախտում: «Ոչ մի կարգին ունդարացի, ոչ մի ազգասէր յանձն չի առնիլ այդ պայմաններում նոր մինիստրութիւն կազմակերպելուց, այդպիսի խօսքեր էին լսում ունդարական բոլոր շրջաններում: Ծնկճուելով հասարակական կարծիքից՝ նոյնիսկ Կոէն-Հեղերվարիի պէս մարդը ստիպուած էր հրաժարուել մինիստր-նախագահի պաշտօնից: Այդպիսի սուր կերպարանք են ստացել իրար հետ արուեստակի կապուած Աւստրիայի և Ունդարիայի յարաբերութիւնները: Եւ կարծես հասել է իրար հետ կառող այդ երկու լծակիցների ապահարզանի ժամը...»

Աւատրիայում, ազգայնական տաք վէճերի հէնց այդ երկը-
րում, կայացաւ մի խումբ ուժոպիստների համաժողով. Վիճննա-
յում օգոստոսի 26-ին գումարուել էր «Միջպարլամենտական
Դաշնակցութեան» ժողովը, որին մասնակցում էին 16 երոպական
սահմանադրական երկրներից հաւաքուած մօտ 400 ներկայա-
ցուցիչներ. Ժողովին մասնակցում էին ազգերի հաւասարու-
թեան և եղբայրութեան, ինչպէս և խաղաղութեան գաղա-
փարի այնպիսի առաքեալներ, ինչպիսիք են՝ ֆրանսիացի
Ֆրեդերիկ Պասսին, անգլիացի Ռինդել Կրամեր և գերմանուհի
Բերտա Զուտտներ:

Այդ ուժոպիստները դեռ չեն կորցնում իրանց հաւա-
ար, որ մարդկութիւնը վերջիվրջոյ կը թողնի միջազգային
վէճեր լուծելու այն բարբարոսական միջոցը, որ հիմնուած է
զէնքի ոյժի վրայ, և կ'ընդունի միջազգային դատարանը՝ իրեւ
արդարադատութիւնը երաշխաւորող միակ արիբունալ: Հետաքըր-
քրական են այդ ժողովներում արտայայտուած խօսքերը, որ պատ-
կանում են Աւատրիայի մինիստր-նախագահ Կեորբերին. Շնչ ան-
հատական անձի փառասիրութիւնը, այլ ազգի պատիւն է այ-
ժըմ դարձել այն զապանակը, որ չի կարելի անտես առնել, եթէ
չէք կամենում շարժման մէջ զցել ամրող ազգային մեխանիզ-
մը: Այդ պատճառով խաղաղասէր պետական գործիչ կարող է
համարուել այժմ միայն նա, ով իրեւ չափ ուրիշ ազգերի պատ-
ւի ընդունում է այն զգացումը, որ նա զգում է դէպի իր
սեպհական ազգը:

Սակայն այդ գեղեցիկ խօսքերը չ'արգելեցին, որ ժողովում
չ'ընդունուէին երկու լին պատզամաւորների (Լեւակովսկի և Ռոշչ-
կովսկի) առաջարկութիւնները մասն՝ ազգութիւնների իրա-
ւունքների որոշման մասին... Զը նայած այդ հանգամանքին՝ այ-
նուամնայնիւ չի կարելի ուրանալ, որ այս 15 տարուայ ըն-
թացքում Միջպարլամենտական Դաշնակցութեան գործիչների
ջանքերը ապարդիւն չեն անցել; Մեր Ն 7 արտ. տեսութեան
մէջ մննք յիշատակեցինք անգիտական և ֆրանսիական պարլա-
մենտների ներկայացուցիչների փոխադարձ համակրական դոյ-
ցերի, ինչպէս և ֆրանս-իտալական մերձեցումների մասին: Այս
վերջին հոսանքը աւելի ևս ուժգին ծաւալ կը ստանայ երկու
երկրները աւելի սերտ միացնող Միմպլոննան տունելի բացու-
մով, երբ Ալպեան անջրպետը այլս չի հեռացնի երկու արիւնա-
կից ազգերին: Անգլօ-ֆրանսիական մերձեցումն ևս նորանոր ար-
տայայտութիւններ ունեցաւ, «Խաղաղութեան գաղափարի և
ընդանուք զինաթափման» առաքեալ դ' էստուրնել զը-կոնստա-
նի կողմանակիցներն օրէցօր աւելանում են Ֆրանսիայում:

Հասարակական կարծիքը Ֆրանսիայում պահանջում է, որ Անդիայի և Ֆրանսիայի մէջ պայմանագիր կապուի, որի գօրութեամբ այդ երկու ամենաազատ երկների մէջ ժագած անհամաձայնութիւնները միջնորդ դատարանով վճռուեն, Ֆրանսիայի նահանգական ժողովներում ծեծուում էր այն հարցը, որ ժամանակ է նաև առեարական դաշն կապել Անդիայի հետ, Այդ քարեկամական տրամադրութեան արտայայտութիւններից մէկն էլ այն է, որ Անդիան ոչ մի արգելք չի յարուցանում Մարոկկոում ֆրանսիական ազդեցութեան ամրանալուն. Երսի նոյն ձեռվ Ֆրանսիան կը վարուի անդիական ձգտումներին Եղիպատուում Համերաշխութիւն է երսում ափրիկական գործերում նաև Ֆրանսիայի և Խտալիայի մէջ. Զգտում մերձենալ Անդիայի հետ երսում է և Գերմանիայում, որին արտայատիչ է հաշակաւոր Մոմզենի նամակը՝ ուղղուած անդիական ազգին...

Այդպիսի հանգամանքներում կարծես դժուար չը պէտք է լինէր Մերձաւոր Արևելքի խաղաղացման զործը, որ անվերջ ձըգձգուելով իրք կաւածաղիկ՝ ամենամեծ արգելք է լինում գէթերոպական զինաթափման իրագործման և առւր կոտորածների ու աւերմունքների պատճառ դառնում նաև կուի դաշտից դուրս Մակեդոնական դէպքերից կատաղած մահմէդական ֆանատիկոսները ատամներ են կրծտաղնում թիւրքիայի բոլոր քրիստոնեաների դէմ, և բնականաբար ոչ մի քրիստոնեայ ապահով չի կարող համարուել այդ երկրում. Այդպէս թիւրք ֆանատիկոսներեան զոհեր տուեց և Բէյրութը, ուր օգոստոսի 24-ին—25-ին տեղի ունեցաւ քրիստոնեանների կոտորած եւրոպական հիւպատոսների աշխերի առաջ:

Անցքի քննութիւնը ցոյց տուեց, որ դեռ վաղուց մահմէդականները Բէյրութում կազմակերպած են եղել մի գաղտնի ընկերութիւն, որ նպատակ է զրել բնաջինջ անել և անհաւատներին: Այդ ընկերութեան գոյութեան մասին գիտէր և տեղական վայն Շէշիդ փաշան: Ամերիկական նաւատորմիզը իհարկէ մօտեցաւ Բէյրութին իր հիւպատոսի և հպատակների կեանքը պաշտպանելու և ոչ սիրիայի ոայեայի փրկութեան համար: Այդ դէպքը հազարերորդ անգամ ապացուցում է, որ մասնակի թեգորմներով չի վճռուի արևելեան հարցը, որովհետեւ վատ բեժիմը անտանելի է, լինի դա Եւրոպական թիւրքիայում, թէ նրա ասիական վիլայէթներում:

I. U.

Սեպտեմբերի 6-ին Լոնդոնում վախճանուել է Սուքիաս վարդապետ Պարոնեանը մօտ 72 տարեկան հասակում։ Սուքիաս վարդապետը հայ-հռովմէական ծնողներից էր. իր ուսումը առել է Վենետիկի Մխիթարեանների մօտ։ Ներսէս պատրիարքի օրով նա ազգային եկեղեցու գիրկն է դարձել և նշանակուել Մանչեստրի հայերի հոգեոր հովիւ։ Երբեմն հովիւ է նշանակուել և Պարիզի հայերի վրայ։ Հանգուցեալը իր վրայ կրում էր Մխիթարեանների դրոշմը—աւելի հնախօսական և բանափական հարցերով հետաքրքրուելով, քան վարչական, հասարակական։